ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 77
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի *գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-002-2104- կադաստրային ծածկագրով 0.02385 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	04-002-2104- կադաստրային ծածկագրով 0.02385 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով՝

- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից նշված տեղեկատվությունը՝ հողամասի տարածքում առկա են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲ ընկերությանը պատկանող կապի վերգետնյա մալուխներ:

4. Վաղարշապատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Էջմիածին քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ղուլարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Դավթյան

Երևան, «24» « մարտի » 2023 թ.